ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 04.02.2013թ.

Ո Ր Ո Շ Ու Մ

ԳԲԽ-05/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-05/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 15.01.2013թ. ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-05/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. **«Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն հայտնել է, որ 26.07.2011թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ կնքել է N ՇՀԱՊՁԲ-11/4-7 շրջանակային համաձայնագիր և գրանցվել է որպես հնարավոր մասնակից:

Բողոքաբեր ընկերությունը հայտնել է նաև, որ «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն՝ «ՍՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-13/2» ծածկագրով հայտարարել է դեղորայքի և բուժ պարագաների գնման ընթացակարգ, որի բացման օրը եղել է 27.12.2012թ.:

Բողոքաբեր ընկերությունը հարկ է համարել նշել, որ նշված մրցույթի մասին վերջինս տեղեկացել է մրցույթի կայանալուց հետո, քանի որ ընկերությունը «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից չի տեղեկացվել որևէ նախատեսված ձևով:

Բողոքի հիմքը և առարկան հանդիսանում է՝ ՀՀ կառավարության 10.02.2011թ. 168-ն որոշման 41-րդ կետի 2-րդ ենթակետի խախտումը, այն է՝ գնումների կամ նախավորակավորման հայտարարության և (կամ) հրավերի տեքստերը հաստատվելու օրվանից հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը՝

1) գնումների կամ նախավորակավորման հայտարարության և հրավերի տեքստերը՝ էլեկտրոնային եղանակով, ուղարկում է ՀՀ ֆինանսների նախարարություն, եթե կազմակերպվում է գնման՝

ա. բաց ընթացակարգ,

բ. մրցակցային երկխոսություն,

գ. սահմանափակ ընթացակարգ,

դ. բանակցային ընթացակարգ՝ գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով,

ե. պարզեցված ընթացակարգ.

2) հրավերը, էլեկտրոնային եղանակով, միաժամանակյա ծանուցմամբ ուղարկում է օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, ա և ե ենթակետերի համաձայն հրապարակված շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին, եթե գնումը կատարվում է շրջանակային համաձայնագրերի միջոցով.

3) հրավերն ուղարկվում է տվյալ գնման հնարավոր մասնակցին (մասնակիցներին), եթե գնումը կատարվում է օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ընթացակարգով.

4) ՀՀ կառավարության սահմանված կարգով ձեռնարկվում են միջոցներ՝ պայմանագիր կնքելու համար, եթե գնումը կատարվում է բորսաներից:

Ընկերությունը գտնում է, որ պատվիրատու հանդիսացող՝ «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն գործել է անօրինաչափ՝ հրավերը էլեկտրոնային եղանակով չի ուղարկել տվյալ գնման հնարավոր մասնակցին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն խնդրել է չեղյալ հայտարարել գնման գործընթացը և եթե «ՍՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-13/2» ծածկագրով գործընթացի ընթացքում կնքվել են պայմանագրեր, չեղյալ հայտարարել կնքված պայմանագրերը:

2. <u>«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 18.01.2013թ. N 06/032-81 գրությամբ դիմել է «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 15.01.2013թ. «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ և ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-7» ծածկագրով որպես հնարավոր մասնակից գրանցված կազմակերպություններին ընթացակարգի վերաբերյալ ուղարկված ծանուցումները հավաստող էլեկտրոնային նամակների պատճենները:

«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 29.01.2013թ. գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին է ներկայացրել «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին ուղարկված ծանուցումները հավաստող էլեկտրոնային նամակների պատճենները, սակայն ներկայացված բողոքի վերաբերյալ որևէ կարծիք չի հայտնել:

3. ԳԲԽ-05/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 15.01.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը մերժել:

4. ԳԲԽ-05/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-05/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) կողմից 15.01.2013թ. ներկայացված բողոքը, դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-7» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) 29.01.2013թ. գրությամբ ներկայացված փաստաթղթերը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն 15.01.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի միջև 26.07.2011թ. կնքվել է դեղորայքի և պատվաստանյութերի գնման N ՇՀԱՊՁԲ-11/4-7 ծածկագրով շրջանակային համաձայնագիրը, որով վերջինս գրանցվել է որպես հնարավոր մասնակից, սակայն «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավեր չի ստացել:

«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 29.01.2013թ. գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին է ներկայացրել «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին 18.12.2012թ. ուղարկված www.mail.ru ինտերնետային էջից ներբեռնված նամակների քաղվածքներ:

18.12.2012թ. քաղվածքի մեջ երևում է, որ hovnan.har@mail.ru էլեկտրոնային փոստից դեկտեմբերի 18-ին ժամը 15:26 natalipharm@bk.ru հասցեով ուղարկվել է «Սիսիանի ԲԿ

գնումներ» վերնագրով էլեկտրոնային նամակ, որին կցվել են 2013vcharman jamanakacujc.xls 3.xls և 2013hraveri teqst.doc 20.doc ծանուցումները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի միջև 26.07.2011թ. կնքված դեղորայքի և պատվաստանյութերի գնման N ՇՀԱՊՁԲ-11/4-7 շրջանակային համաձայնագրի վավերապայմաններում նշված է «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի natalipharm@bk.ru էլեկտրոնային փոստի հասցեն:

ԳԲԽ-05/13 բողոքը քննող հանձնաժողովի 29.01.2013թ. կայացած նիստում տեղի ունեցած բանավոր լսումների ընթացքում Հանձնաժողովը «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին տրամադրեց «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից նշված ընթացակարգին մասնակցելու նպատակով www.mail.ru հասցեում գտնվող ինտերնետային էջից ներբեռնված քաղվածքները՝ խնդրելով հայտնել, թե արդյո՞ք նշված էլեկտրոնային հասցեն պատկանում է «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին:

Ընկերության ներկայացուցիչը հավաստեց, որ տրամադրված ծանուցումներում նշված էլեկտրոնային հասցեն պատկանում է «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին և հայտնեց, որ թեև իրենք չեն ստացել ներկայացված ծանուցումները, այնուամենայնիվ ներկայացված ծանուցումներից պարզվում է, որ «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն միաժամանակյա ծանուցումն իրականացրել է:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ բողոքն անհիմն է, քանի որ բողոքի քննության ընթացքում հավաստվեց Պատվիրատուի կողմից բողոքաբեր կազմակերպությանը ծանուցում ուղարկելու հանգամանքը, իսկ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն Պատվիրատուն պարտավորություն չի կրում ընթացակարգի մասնակիցներին էլեկտրոնային ծանուցումների ստանալն ապահովելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) 41-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը, էլեկտրոնային եղանակով, միաժամանակյա ծանուցմամբ ուղարկվում է օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հրապարակված շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին, եթե գնումը կատարվում է շրջանակային համաձայնագրերի միջոցով:

Հրավերի 1-ին մասի 6.1 ենթակետի համաձայն՝ նույն ընթացակարգի շրջանակներում գնումներ կատարելու նպատակով պատվիրատուն շրջանակային համաձայնագրեր կնքած

անձանց միաժամանակ ծանուցում է հայտ ներկայացնելու մասին՝ կցելով կնքվելիք պայմանագրի նախագիծը և ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Այսինքն, «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-7» ծածկագրով ընթացակարգի հրավերն ուղարկվել է նշված ընթացակարգին մասնակցելու նպատակով «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին և Պատիրատուի կողմից չեն խախտվել Կարգի 41-րդ կետի 2-րդ ենթակետով և Հրավերի 6.1 ենթակետով սահմանված պահանջները:

Այսպիսով, գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Նատալի ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 15.01.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը մերժել:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գոռ Ենոքյան

Անդամ՝ Վարազդատ Մկրտչյան